

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/1

5 հունիսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 07.10.2011թ-ի նիստում քննության է առնվել <Գետամեջի թոչնաֆաբրիկա> ՍՊԸ 30.09.2011թ-ի թիվ 174 գրությամբ ներկայացված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 2-րդ բաժնի 30.07.2011թ. թիվ 1009612 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 53/14 որոշումը, որի համաձայն <Գետամեջի թոչնաֆաբրիկա> ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) 30.09.2011թ-ի թիվ 174 գրությամբ ներկայացված գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 2-րդ բաժնի 30.07.2011թ. թիվ 1009612 ստուգման ակտի դեմ բերված գանգատին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

<Գետամեջի թոչնաֆաբրիկա> ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 30.05.2012թ-ի թիվ 30/1 գրությամբ բերվել է միջնորդություն, որով Ընկերությունը խնդրել է, որպեսզի 30.09.2011թ-ի թիվ 174 գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 2-րդ բաժնի 30.07.2011թ. թիվ 1009612 ստուգման ակտի դեմ ներկայացված գանգատը թողնվի առանց քննության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի և 51-րդ հոդվածի դրույթները գտնում է, որ Հանձնաժողովի 07.10.2011թ-ի թիվ 53/14 որոշմամբ կասեցված վարչական վարույթը ենթակա է նախ վերսկսման, ապա՝ կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 07.10.2011թ-ի թիվ 53/14 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել:

2. <Գետամեջի թոչնաֆաբրիկա> ՍՊԸ 30.09.2011թ-ի թիվ 174 գրությամբ ներկայացված գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ